# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 092

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՄԿՐՏԻՉ ԻՎԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ԱՄԱԼՅԱ ՀԱՅԿԱԶԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՄԿՐՏԻՉԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ՆՈՒՆԵ ՄԿՐՏԻՉԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ՄՀԵՐ ՄԿՐՏԻՉԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.124 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Ճանաչել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչներ Մկրտիչ Իվանի Մկրտչյանի, Ամալյա Հայկազի Մկրտչյանի, Կարեն Մկրտիչի Մկրտչյանի, Նունե Մկրտիչի Մկրտչյանի և Մհեր Մկրտիչի Մկրտչյանի կողմից փաստացի օգտագործվող Արենի համայնքի Արենի բնակավայրի 42-րդ փողոց, թիվ 23 հասցեում գտնվող 0.124հա բնակավայրերի նշանակության հողամասի սեփականության իրավունքը (ծածկագիրը՝ 10-008-0007-0016):

2. Մկրտիչ Մկրտչյանի և նրա ընտանիքի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.124 հա բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 093

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.11270 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0109-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության և գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0,28714 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0109-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության և գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 094

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.90722 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիր՝ 10-008-0184-, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 1.02553 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0184-, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 095

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, ստորև ներկայացված հողամասերը օտարելու առաջարկություն ներկայացնել համայնքի ավագանուն.

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող

1.1 0.90722հա (ծածկագիրը՝ 10-008-0184-, գործառնական նշանակությունը՝ այլ ) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ից ոչ պակաս՝ 300 000 ՀՀ դրամ,

1.2 1.02553հա (ծածկագիրը՝ 10-008-0184-, գործառնական նշանակությունը՝ այլ) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ից ոչ պակաս՝ 350 000 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող

2.1 0.11270հա (ծածկագիրը՝ 10-036-0109-, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 195 000 ՀՀ դրամ,

2.2 0.28714հա (ծածկագիրը՝ 10-036-0109-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով

օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 300 000 ՀՀ դրամ,

2.3 0.13613 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0022, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 460 000 ՀՀ դրամ,

2.4 0.12808 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0023, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 435 000 ՀՀ դրամ,

2.5 0.12808 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0023, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 425 000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՍԱՐԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 096

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.13613 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-036-0035-0022, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Վերը նշված հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 17 փողոց, 2 նրբ., թիվ 30:

3. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.12808 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-036-0035-0023, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

4. Վերը նշված հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 17 փողոց, 2 նրբ., թիվ 32:

5. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.12473 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-036-0035-0023, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

6. Վերը նշված հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 17 փողոց, 2 նրբ., թիվ 34:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 097

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՅՈՒՂ ԱՐԵՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ և ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՙՙԱրենի Ուայն Հոթել՚՚ ՍՊԸ գրությունը գյուղ Արենի հողմասի հասցեի գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին: Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել սեփականության իրավունքի գրանցման N 26082020-10-0002 վկայականը տրամադրված 26.08.2020թ.: Տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի վերաճշտումից պարզվել է, որ քննարկվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0,72577 հա, ընդգրկված է գյուղատնտեսական նպատակային նշանակության, Այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասերի ցանկում, ինչը ամրագրված է սեփականության իրավունքի գրանցման N 26082020-10-0002 վկայականում և համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1,2 և 3 կետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: Ղեկավարվելով ՙՙՏեղական ինքնակառավարման մասին՚՚ ՀՀ օրենքով, ՙՙՎարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին՚՚ օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, Հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածքներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Սահմանել, որ գյուղ Արենի հասցեում գտնվող հողամասի սահմանները որոշվում են 0,72577 հա մակերեսի համար սահմանված կարգով, ՙՙՍայզ՚՚ ՍՊԸ կողմից կազմված և հաստատված հատակագծով:

Որոշման կատարման և կազմակերպման պատասխանատվությունը դնել Արենի համայնքի աշխատակազմի ղեկավարի վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 098

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՅՈՒՂ ԱՐԵՆԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 4 –ՐԴ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ և ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՛՛Արենի Ուայն Հոթել՛՛ ՍՊԸ գրությունը գյուղ Արենի 2-րդ փողոց 4–րդ հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին: Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել սեփականության իրավունքի գրանցման N 23042018-10-0003 վկայականը տրամադրված 23.04.2018թ.: Տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի վերաճշտումից պարզվել է, որ քննարկվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 3,40677 հա, ընդգրկված է բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական գործառնական նշանակության հողամասերի ցանկում, ինչը ամրագրված է սեփականության իրավունքի գրանցման N 23042018-10-0003 վկայականում և համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1,2 և 3 կետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքով, ՛՛Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին՛՛ օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, Հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածքներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Սահմանել, որ գյուղ Արենի 2-րդ փողոց 4–րդ հասցեում գտնվող հողամասի սահմանները որոշվում են 3,40677 հա մակերեսի համար սահմանված կարգով, ՛՛Սայզ՛՛ ՍՊԸ կողմից կազմված և հաստատված հատակագծով:

Որոշման կատարման և կազմակերպման պատասխանատվությունը դնել Արենի համայնքի աշխատակազմի ղեկավարի վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 099

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 09.10.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 51 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

Արենի համայնքի ղեկավարի կողմից 09.10.2019 թվականին տրամադրված թիվ 51 շինարարության թույլտվության մեջ

1. <<Թուֆենկյան Հոսպիթալիթի ՍՊԸ>> բառերը փոխարինել <<Արենի Ռեյն Հոթել ՍՊԸ>> բառերով:

2. Երկրորդ պարբերության մեջ Արենի բնակավայր բառերից հետո ավելացնել <<2-րդ փողոց թիվ 4>> բառերը և թվերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 100

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՂԱՐՇԱԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 2.33085ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.0112ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՆՇՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Յայաստանի Յանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.05.2002թվականի թիվ 498, 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշումները, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վաղարշակ Գարեգինի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2.33085հա (ծածկագիր՝ 10-008-0112-0124, 2.32714հա-ի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը 4-րդ կարգի ջրովի վարելահող, 0.00371հա-ի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասից առանձնացված 0.0112հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության
2. Վերը նշված հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի Երևանյան խճուղի 9-րդ փակուղի, թիվ 11:
3. Առաջարկել հողի սեփականատեր Վաղարշակ Պետրոսյանին վճարելու 0.0112հա բնակավայրերի նշանակության հողամասի և գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի ջրովի վարելահողի կադաստրային արժեքների տարբերությունը՝ 128 968 ՀՀ դրամ (112քմ.*(1221դր-69.5դր.) = 128 968 դր.), հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին ենթակետը:

4. Վերը նշված հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
5. Նշված հողամասի վրա բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով Վաղարշակ Պետրոսյանին տրամադրել շինարարության թույլտվություն: Շին.ույլտվության հերթական համարն է 12:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 101

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.03.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 056 ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՄԱՍԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 570.97ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ սահմանված կարգը, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, ՀՀ կառավարության 29.07.2017թ.-ի թիվ 757-Ն որոշման հավելված 1-ը, Արենի համայնքի ավագանու 05.03.2021թվականի թիվ 26 որոշումը, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 10.03.2021թվականի թիվ 056 որոշման 1-ին մասը:
2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 570.97քմ մակերեսով նախկին ուսուցչի տան նպատակային նշանակությունը փոխադրել որպես բնակելի շենք նպատակային նշանակության:
3. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 570.97քմ մակերեսով բնակելի շենքը ճանաչել օրինական և գրանցել որպես համայնքային սեփականություն,
4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված կառույցն իրականացրած անձն անհայտ է կառույցը տնօրինել Արենի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 43.1 կետը,
5. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 102

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.38071 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի անջրդի վարելահող գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0,28194 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի անջրդի վարելահող գործառնական նշանակության:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 3.48583 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0239-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

4. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.70474 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0273-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

5. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 3.04716 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0273-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 103

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.38071 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի անջրդի վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0,28194 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի անջրդի վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 3.48583 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0239-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

4. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.70474 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0273-, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

5. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 3.04716 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0273-, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

6. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.19448 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի անջրդի վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

7. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.18388 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի անջրդի վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 104

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.01645ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2005թվականի N 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.01645հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-037-0002-, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական) գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Վերը նշված հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Ռինդ 3-րդ փողոց, 1 փկղ. թիվ 16:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՌՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 105

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՍՄԲԱՏ ՍԱՐԻԲԵԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՎԱՐԴԻԹԵՐ ԺՈՐԺԻԿԻ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԵՎ ՍԼԱՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.22069 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Ճանաչել Արենի համայնքի Ռինդ բնակավայրի բնակիչներ Սմբատ Սարիբեկի Հարությունյանի, Վարդիթեր Ժորժիկի Ջոհրաբյանի և Սլավիկ Սմբատի Հարությունյանի կողմից փաստացի օգտագործվող Արենի համայնքի Ռինդ բնակավայրում գտնվող 0.22069հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերի սեփականության իրավունքը:

2. Սմբատ Հարությունյանի և նրա ընտանիքի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.22069հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 106

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 049 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, և Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Արենի համայնքի ղեկավարի 02.03.2021 թվականի «Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքերը ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխադրելու և առանձին միավոր գրանցելու մասին» թիվ 049 որոշման մեջ

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 2.23578հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0432-, 0.899հա-ի գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի վարելահող, 1.33678հա-ի գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության

2. 4-րդ մասի մեջ <<2.43691>> թիվը փոխարինել <<2.23578>> թվով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**